

Maatregelen | 10/07/2020

ARMEENS | Vertaald uit het Nederlands

Կանոննր՝ հոկիսի 10

Ներածություն

Կառավարությունը միջոցներ է ձեռնարկել կորոնավիրուսի տարածումը սահմանափակելու համար: Սահմանված կանոնները պետք է հարգել: Այդպիսով կխուսափենք հիվանդանալ կամ վարակել այլ անձանց: Ոստիկանությունը պարտավոր է վերահսկել սույն կանոնների ապահովումը:

Հիմնարար կանոններ

- Ե՞թե հիվանդ եք, մնացե՛ք տանը:
- Ձեռքերը պարբերաբար լվացե՛ք օճառով և ջրով:
- Միմյանց միջև պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն:
- Թուլատրվում է շփվել մեկ շաբաթվա ընթացքում առավելագույնը 15 մարդու հետ: Ցանկալի է դրսում:
- Գտնվում եք մի վայրում որտեղ շատ մարդիկ կան (խանութ, կինոսրահ, գրադարան, գնացք, ավտոբուս,...) Եթե դուք 12 տարեկանից բարձր եք, պետք է դիմակ կրեք: Հատուկ վայրերում պարտադիր է:
- Գտնվում եք այնպիսի վայրում որտեղ դժվար է պահպանել 1,5մ սոցիալական հեռավորությունը, կրեք դիմակ:
- Ձեզ հետ միշտ վերցրեք դիմակ:

Ճանապարհորդել երկրի ներսում կամ սահմաններից դուրս

- Բեյգիայում
 - Կարող եք ազատ ճանապարհորդել:
 - Օգտվում եք տրանսպորտից (ավտոբուս, տրամվայ, գնացք), 12 տարեկանից բարձր եք՝ պետք է ձեր բերանը և քիթը դիմակով կամ շարժով փակեք:
- Արձակուրդն անցկացնել սահմաններից դուրս
 - Կարող եք մեկնել միայն Եվրոմիության անդամ երկրներ, այդ թվում նաև Միացյալ Թագավորություն, ինչպես նաև Շվեյցարիա, Լիխտենշտեյն, Իսլանդիա և Նորվեգիա:
 - Արտերկրում սահմանված կանոններին կարող եք ծանոթանալ հետևյալ ինտերնետային կայքում
https://diplomatie.belgium.be/nl/Diensten/Op_reis_in_het_buitenland/reisadviezen.
 - Կան 3 տարբեր գոտիներ՝
 - ▶ Կանաչ գոտի՝ ճանապարհորդելը թույլատրվում է: Դա ապահով է:
 - ▶ Կարմիր գոտի՝ ճանապարհորդելը չի թույլատրվում:

- ▶ Նարնջագույն գոտի՝ խորհուրդ չի տրվում ճանապարհորդել:
Դիտեք Արտաքին գործերի մինիստրության կայքում՝ diplomatie.belgium.be
- Եղել էք կարմիր գոտում. Այս 3 գործողությունները պետք է կիրառեք երբ վերադարնաք Բելգիա՝
 - 1 Պարտադիր պետք է կարանտինի մեջ գտնվեք. Ինչքան հնարավոր է շուտ թեստավորվեք. Կապնվեք ձեր ընտանեկան բժշկի հետ. Ինքնաթի՞ր եք նստել . Ուրեմն ձեզ կթեստավորեն հենց օդանավակայանում.
 - 2 Պետք է տանը մնաք. Դուրս եկեք միայն խիստ անհրաժեշտության դեպքում. Օրինակ՝ դեղատուն,բժշկի մոտ կամ սննդի խանութ գնալու համար. Միշտ դիմակ կրեք.
 - 3 Կողմնակի մարդկանց տուն չթողնեք.
- Եղել էք նարնջագույն գոտում . Այս 3 գործողությունները պետք է կիրառեք երբ վերադարնաք Բելգիա՝
 - 1 Խորհուրդ է տրվում կարանտինի մեջ գտնվել. Որքան հնարավոր է շուտ թեստավորվեք. Կապնվեք ձեր ընտանեկան բժշկի հետ.
 - 2 Դուրս եկեք միայն խիստ անհրաժեշտության դեպքում. Օրինակ՝ դեղատուն,բժշկի մոտ կամ սննդի խանութ գնալու համար. Միշտ դիմակ կրեք.
 - 3 Կողմնակի մարդկանց տուն չթողնեք:

Աշխատանք

- Աշխատե՛ք հնարավորինս տանը:
- Ե՞թե ստիպված եք գնալ ձեր աշխատանքի վայր, ապա Ձեր գործատուից պահանջվում է ապահովել առնվազն 1,5 մ սոցիալական հեռավորության կանոնները: Ե՞թե դա կիրառելի չէ, ապա դիմեք ձեր գործատուին դիմակ ստանալու համար:
- Ե՞թե ունեք հարցեր, ապա, լրացուցիչ տեղեկությունների համար, կարող եք դիմել ձեր գործատուին:

Խանութներ

- Բոլոր խանութները բաց են:
- Գիշերային խանութները բաց են մինչև առավոտյան 1-ը:
- Կրեք դիմակ . Դա պարտադիր է.
- Բացօթյա շուկաները գործում են:
- Կարող եք գնալ վարսավիրանոց կամ գեղեցկության սրահ:
 - Հանդիպման ժամը նշանակե՛ք նախօրոք:
 - Կրե՛ք դիմակ:

Սրճարանային և ռեստորանային համակարգ

- Սրճարաններն ու ռեստորանները կգործեն են մինչև առավոտյան 1-ը:
 - Խորհուրդ է տրվում ամրագրել նախօրոք:
 - Յուրաքանչյուր խմբում թուլատրվում է առավելագույնը 15 հոգի:
 - Ձեր սեղանի շուրջ մնացե՛ք նստած:

Սոցիալական շփում

- Հնարավոր է ամեն շաբաթ սերտ շփում ունենալ 15 տարբեր մարդկանց հետ:
 - Խորհուրդ է տրվում հանդիպել դրսում:
 - Ե՞թե դա հնարավոր չէ, ապա լավ օգափոխեք տարածքը, պատուհանը բացե՛ք:
- Ցանկանում եք խմբակային գործունեություն ծավալել (օրինակ՝ գնալ ռեստորան կամ էքսկուրսիա, կամ ձեր տան հյուրընկալություն կազմակերպել): Այս հանդիպումները սահմանափակվում են առավելագույնը 15 անձով:.

Վարժանքներ

- Մարզվել թուլատրվում է առավելագույնը 50 հոգանոց խմբով: Պահպանե՛ք առնվազն 1.5 մ հեռավորություն
- Մարզավել հնարավոր է ֆիթնես կենտրոնում կամ մարզական ակումբում:
- Սաունաներն ու բարեկեցության կենտրոնները գործում են հանրության համար:

Ժամանց

- Հուլիսի 1-ից բաց կլինեն օրինակ գրադարանները, այգիները, խաղահրապարակները և խաղատները.
- Պաշտոնական հանդիպումների կամ առիթների համար նույնպես սահմանված է մարդկանց առավելագույն քանակ.
 - Հուլիսի 1-ից՝ փակ տարածքում առավելագույնը 200 հոգի, դրսում 400 հոգի
 - Օգոստոսի 1-ից՝ փակ տարածքում առավելագույնը 400 հոգի, դրսում 800 հոգի.
- Ամեն կազմակերպություն ունի իր օրակարգը. Դիտեք կայքում.
- Երեխաները կարող են ճամբար գնալ.
- Պարտավոր եք դիմակ կրել գրադարաններում, կինոդահլիճներում, թանգարաններում, թատրոններում, համերգների ժամանակ և նիստերի դահլիճում. Պարտադիր է.

Ի՞նչը դեռ հնարավոր չէ

- Դիսկոտեկները կամ գիշերային ակումբները դեռ չեն կարող վերաբացվել:
- Չեն թույլատրվում խոշոր միջոցառումները (օրինակ՝ փառատոներ):

Կրոն

- Կրոնական պաշտամունքի արարողությունները կարող են վերսկսվել:
 - Առավելագույնը 200 հոգու մասնակցությամբ:
 - Ցանկացած ֆիզիկական շփում արգելվում է:
 - Պետք է դիմակ կրել. Դա պարտադիր է.

Մանկամտուրներ և դպրոցներ

- Մանկամտուրները բաց են:
- Լրացուցիչ տեղեկություններ ուսումնական հաջորդ տարվա վերաբերյալ կարող եք ստանալ դպրոցական հաստատությունից:

Խրախուսում

Այս սահմանափակումները կարևոր են հանրային առողջության համար: Ակնկալվում է բոլորի ողջամտությունը: Շնորհակալություն մասնակցության համար: Կորոնավիրուսին կհաղթենք համատեղ պայքարով: